ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 18 » հունվարի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-01/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 08.01.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Նոր-Էներջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 08.01.2016թ. ներկայացրած բողոքով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանը ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման

աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.12.2015թ. կազմակերպվել է «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, 1-ին և 2-րդ չափաբաժիններին մասնակցել է նաև «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն.

- հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան,

- բացված ծրարներում առկա չեն հրավերով պահանջված փաստաթղթերը կամ փաստաթղթերը կազմված չեն սահմանված պահանջներին համապատասխան,

- հանձնաժողովը որոշել է հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները, հանձնաժողովը որոշել է չկայացած հայտարարել Վայքի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ պատշաճ է գնահատել «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, իսկ Ընկերության հայտը մերժելով կոպտորեն խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 74-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի կիրառման ժամանակ գործում են սույն կարգի 7-րդ բաժնով սահմանված պահանջները՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) եթե գնումն իրականացվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «գ» և «դ» պարբերությունների հիման վրա, ապա՝

ա. հրավերը գնման հայտում նշված մասնակիցներին ուղարկվում է միաժամանակյա ծանուցմամբ՝ հրավերը նույն օրը հրապարակելով նաև www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում,

բ. հայտերի ներկայացման ժամկետը սահմանվում է ոչ շուտ, քան հրավերն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մեկ աշխատանքային օր: Ընդ որում, Կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված դեպքում հայտերը ներկայացնելու ժամկետը կարող է սահմանվել հրավերն ուղարկվելու պահից հաշված առնվազն տասներկու ժամ, եթե, տվյալ գործուղումը թույլատրող իրավական ակտի ընդունման ժամկետով պայմանավորված, սույն ենթակետով նախատեսված ժամկետի ավարտի պահպանումն անհնար է,

գ. մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մասնակցության իրավունքի սահմանափակումը չի կիրառվում, իսկ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որակավորումը հրավերով սահմանվում և գնահատվում է՝ հիմք ընդունելով սույն կարգով սահմանված պահանջները,

դ. մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, համատեղ գործունեության պայմանագիր, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են կոնսորցիումով, գնային առաջարկ, որակավորումը հիմնավորող փաստաթղթեր, ապրանքների գնման դեպքում ապրանքի անվանում և տեխնիկական բնութագրեր, հայտի ապահովում,

ե. մասնակիցը հայտը քարտուղարին (գնումների համակարգողին) է ներկայացնում հրավերով սահմանված կարգով՝ փակ ծրարով,

զ. հայտերի բացումը, գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է հայտերի բացման նիստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն հայտերը, որոնք գնահատվել են հրավերի պահանջներին անբավարար, մերժվում են, իսկ հրավերի պահանջները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած՝ նիստի ներկա մասնակիցների ներկայացուցիչների հետ կազմակերպվում են ներկայացված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ և բանակցությունների ավարտին նվազագույն գին ներկայացրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, որի հետ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով կնքվում է պայմանագիր: Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ

պայմանագիրը կնքելու իրավունքից զրկվելու դեպքում, պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին,

է. անգործության ժամկետ չի սահմանվում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝

1) պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը.

2) գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը.

3) հրավերը և դրանում կատարված փոփոխությունները.

4) գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.

5) հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.

6) հայտերով ներկայացված գները.

7) հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները.

8) **հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը.**

9) պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

10) գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը.

11) գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները.

12) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ըստ Ընկերության, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված

պահանջները, քանի որ գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ որևէ կերպ անդրադարձ չի կատարվել, չի հիմնավորվել, թե ինչու է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հայտը մերժվել, կամ հրավերով պահանջված ինչ փաստաթղթեր են բացակայել, կամ հայտում առկա որ փաստաթղթերը կազմված չեն եղել հրավերի պահանջներին համապատասխան, արդյունքում անհիմն կերպով մերժվել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընկերությունը բողոքով պնդել է, որ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից հայտը պատրաստվել է Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, իսկ հայտում առկա են եղել նույն Ընթացակարգի հրավերով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Ըստ Ընկերության՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հայտը մերժելը զուտ կամայականության հետևանք է, որի արդյունքում կոպտորեն խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է չեղյալ համարել, անվավեր ճանաչել կամ դադարեցնել ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հայտն Ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթեր առկա չլինելու, հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

2. <u>Վայքի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Վայքի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.01.2016թ. թիվ 1 գրությամբ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.12.2015թ.

կազմակերպվել է «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 30.12.2015թ. ժամը 10:30-ին, որի ընթացքում բացվել և գնահատվել են թվով չորս մասնակիցների կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտերը:

Հայտերի գնահատման արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է.

1. հայտեր ներկայացրած բոլոր չորս մասնակիցների ներկայացրած ծրարները ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան,

2. բոլոր չորս մասնակիցների ներկայացրած ծրարներում առկա չեն եղել հրավերով պահանջված փաստաթղթերը և փաստաթղթերը կազմված չեն եղել հրավերի պահանջներին համապատասխան:

Մասնավորապես, «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն (կոնսորցիումով մասնակցել է «Էկոլակտ» ՍՊԸ-ի հետ) իր ներկայացրած հայտում «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գծով ներկայացրել է հայտարարություն հայտը ներկայացնելու և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված շինարարական աշխատանքներ՝ 83494989 ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Համաձայն Կարգի 69-րդ կետի՝ շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը: Նշված շինարարական աշխատանքները (կոյուղագծի վերակառուցում) «Էկոլակտ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են միայն հիդրոտեխնիկական լիցենզիայի շրջանակներում, ինչը բավարար չէ հրավերով պահանջվող համանման (նմանատիպ) աշխատանքներ կատարելու փաստը հավաստելու համար:

«Մասնագիտական փորձառություն» չափանիշի գծով ներկայացված 10.06.2014թ. թիվ ՊՎԱԸԾ/Արզումանյան Բաշինջաղյան Աշխ/20 պայմանագրի պատշաճ կատարման հավաստման համար «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն չի ներկայացրել պայմանագրի կատարման կատարողական ակտերը կամ ընդունման-հանձնման արձանագրությունները, այլ ներկայացրել է միայն ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը:

Պատվիրատուն հայտնել է, որ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով պահանջվող լիցենզիաների պատճենները, որոնք տրվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից 23.12.2015թ.: Ուստի Ընկերությունը չունի նշված լիցենզիաների շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների կատարման փորձառություն:

Ընկերությունը հայտով ներկայացրել է տուժանքի համաձայնություն, որին կից ներկայացված վճարման պահանջագրերում վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվ է նշված 29.12.2015թ., սակայն ամսաթիվը պետք է նշի շահառուն վճարովի բանկին նշված պահանջագիրը ներկայացնելու օրը:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշել է հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում, որի արդյունքում որոշել է չկայացած հայտարարել Վայքի քաղաքապետարանի կողմից հայտարարած Ընթացակարգը՝ համաձայն Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

3. <u>ԳԲԽ-01/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-01/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանը՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 28.12.2015թ. կազմակերպվել է «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

2. Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն և «Էկոլակտ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 30.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրությամբ արձանագրվել է՝

- հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան,

- բացված ծրարներում առկա չեն հրավերով պահանջված փաստաթղթերը կամ փաստաթղթերը կազմված չեն սահմանված պահանջներին համապատասխան,
- հանձնաժողովը որոշել է հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշել է Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ չկայացած հայտարարել Վայքի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը:

4. <u>ԳԲԽ-01/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 08.01.2016թ. ներկայացրած բողոքը, Վայքի քաղաքապետարանի 12.01.2016թ. թիվ 1 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ ***հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված

պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, *բացված ծրարներում առկա չեն հրավերով պահանջված փաստաթղթերը կամ փաստաթղթերը կազմված չեն սահմանված պահանջներին համապատասխան*, սակայն հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, մասնավորապես, թե «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի բացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերից կոնկրետ որ փաստաթղթերն առկա չեն եղել կամ որ փաստաթղթերը կազմված չեն սահմանված որ պահանջներին համապատասխան, ինչը հակասում է իրավական որոշակիության և կանխատեսելության պահանջներին:

Ավելին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան ***հայտի մերժման դեպքում*** պետք է պարունակեր ***հայտի մերժման հիմնավորումը***:

Արդյունքում, հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ չկայացած հայտարարել Վայքի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 08.01.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի քաղաքապետարանի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 30-ին ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի հայտն Ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթեր առկա չլինելու, հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ճանաչելու և Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-01/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան